ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 5
Հեռ. (+37410) 511-703

ՎԴ-1-Ե-

28 փետրվարի 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԽԻԹԱՐ ՊԱՊՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Պապոյան,

Սույն թվականի փետրվարի 22-ին, 23-ին և 28-ին ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել են՝

1. մեղադրյալ Բենյամին Աշոտի Ասատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Հակակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման դեմ պաշտպան Ս.Նազարյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0297/01/23 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ս.Համբարձումյանի՝ 2024 թվականի փետրվարի 20-ի որոշումը,

2. մեղադրյալ Մուշեղ Պողոսյանի նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցը փոխելու և որպես խափանման միջոց կալանքը կիրառելու վերաբերյալ հանրային մեղադրող Գ.Սարգսյանի միջնորդությունը մերժելու մասին Հակակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Առաքելյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0236/01/23 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի դատավոր Վ.Մարգարյանի՝ 2024 թվականի փետրվարի 20-ի որոշումը,

3. թիվ 69135023 քրեական վարույթով մեղադրյալ Հայկ Դավթի Թադևոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ պաշտպան Հ.Ալումյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0009/06/24 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Լ.Ալավերդյանի՝ 2024 թվականի փետրվարի 16-ի որոշումը,

4. թիվ 69113523 քրեական վարույթով մեղադրյալ Հարություն Աշոտի Տեր-Թադևոսյանի նկատմամբ որպես խափանման կալանքը կիրառելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 2-ի որոշման դեմ պաշտպան Ա.Մարգարյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0023/06/24 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վ.Մարգարյանի՝ 2024 թվականի փետրվարի 21-ի որոշումը,

5. թիվ 62202424 քրեական վարույթով բանկային գաղտնիք պարունակող փաստաթղթերի առգրավում կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հունվարի 25-ի՝ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Օվսյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0043/07/24 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մ.Մելքոնյանի՝ 2024 թվականի փետրվարի 19-ի որոշումը,

6. թիվ 69113523 քրեական վարույթով մեղադրյալ Իշխան Գագիկի Հովհաննիսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Կ.Համբարձումյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ

հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0195/06/23 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանի՝ 2024 թվականի փետրվարի 16-ի որոշումը,

7. թիվ 69113523 քրեական վարույթով մեղադրյալ Ջիվան Սամվելի Շահվերդյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հունվարի 24-ի որոշման դեմ պաշտպան Կ.Գրիգորյանի հատուկ վերանայման բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0198/06/23 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ն.Հովակիմյանի՝ 2024 թվականի փետրվարի 19-ի որոշումը,

8. թիվ 69113523 քրեական վարույթով մեղադրյալ Խաչիկ Մկրտչի Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մասնակի բավարարելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ռ.Գևորգյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված ՀԿԴ/0204/06/23 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Լ.Աբգարյանի՝ 2024 թվականի փետրվարի 19-ի որոշումը,

9. թիվ 69113523 քրեական վարույթով մեղադրյալ Մովսես Գևորգի Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մասնակի բավարարելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հունվարի 19-ի որոշման դեմ պաշտպան Զ.Հակոբյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0219/06/23 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ա.Մաթևոսյանի՝ 2024 թվականի փետրվարի 19-ի որոշումը,

10. թիվ 69113523 քրեական վարույթով մեղադրյալ Զավեն Հովհաննեսի Առաքելյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու

մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հունվարի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ռ.Գևորգյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0185/06/23 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Լ.Ալավերդյանի՝ 2024 թվականի փետրվարի 23-ի որոշումը,

11. թիվ 61206920 քրեական վարույթով բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերի առգրավում կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հունվարի 26-ի՝ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ծ.Մնացականյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0065/07/24 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վ.Մարգարյանի՝ 2024 թվականի փետրվարի 23-ի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *«**դատաքննություն**՝ առաջին ատյանի դատարանում մեղադրանքի քննության, իսկ վերադաս դատարանում դրա արդյունքով կայացված եզրափակիչ դատական ակտի իրավաչափության ստուգման կապակցությամբ իրականացվող գործունեություն»:*

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

2. Եթե հիմնական դատաքննությունների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության: (…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում դատավորը առարկայական ընդդատության հարցի որոշման համար վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է դատական վարույթի մասնակիցներին, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան: (…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ (…)»:

Վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ բացառապես առաջին ատյանի դատարանում է դատաքննությունը ներառում նախնական դատալսումների, հիմնական դատալսումների և լրացուցիչ դատալսումների միմյանց հաջորդող երեք պարտադիր ենթափուլերը, որոնցից յուրաքանչյուրը կոչված է անհրաժեշտ պայմաններ ստեղծել առաջին ատյանի դատարանում քրեական վարույթի պատշաճ և արդյունավետ իրականացման համար: Վերոնշյալ ենթափուլերից յուրաքանչյուրում դատարանը կողմերի մասնակցությամբ քննարկում և լուծում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ նախատեսված հարցեր:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, դատական վարույթի իրավաչափությունն ապահովելու, ինչպես նաև հիմնական դատալսումների արդյունավետ իրականացման պայմաններ ստեղծելու նպատակով, սահմանել է առաջին ատյանի դատարանում նախնական դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարցերի շրջանակը՝ ի թիվս այլնի, նախատեսելով նաև վարույթի ընդդատությունը քննարկելու հարցը: Մասնավորապես, նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության: Միաժամանակ, օրենսդիրը նախատեսել է, որ եթե վարույթի փոխանցման արդյունքում ***առաջին ատյանի դատարանների*** միջև տարածքային կամ առարկայական ընդդատության կապակցությամբ անհամաձայնություն է առաջանում, վարույթն ըստ ընդդատության ստացած դատարանը, մինչև նախնական դատալսումներ նշանակելը, որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին:

Վերոշարադրյալից հետևում է, որ օրենսդիրն ընդդատության հարցը որոշելու համար վարույթը Վճռաբեկ դատարանին ուղարկելու իրավասություն վերապահել է միայն վարույթն ըստ առարկայական կամ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի դատարաններին, ինչը բխում է դատարանների միջև գործառութային կապն ապահովելու պահանջից: Մասնավորապես, դատարանակազմական խնդիրներով պայմանավորված՝ առաջին ատյանի և

վերաքննիչ դատարաններն իրականացնում են տարբեր դատավարական գործառույթներ և համապատասխանաբար օժտված են դրանց կատարումն ապահովող տարբեր լիազորություններով: Այսպես, եթե առաջին ատյանի դատարանը քննության է առնում մեղադրանքը, ապա վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգում է մեղադրանքի քննության արդյունքով կայացված եզրափակիչ դատական ակտի իրավաչափությունը:

Վերը նշվածը հիմք է փաստելու, որ առկա իրավակարգավորումների պայմաններում, ընդդատության հարցը որոշելու համար վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու իրավասություն վերաքննիչ դատարաններին վերապահված չէ, որի հաշվառմամբ վերադարձվում են թիվ ՀԿԴ/0297/01/23, ՀԿԴ/0236/01/23, ՀԿԴ/0009/06/24, ՀԿԴ/0023/06/24, ՀԿԴ/0043/07/24, ՀԿԴ/0195/06/23, ՀԿԴ/0198/06/23, ՀԿԴ/0204/06/23, ՀԿԴ/0219/06/23, ՀԿԴ/0185/06/23, ՀԿԴ/0065/07/24 վարույթները:

Առդիր՝

1. թիվ ՀԿԴ/0297/01/23 վարույթը՝ չորս հատորից (համապատասխանաբար՝ 231, 231, 161 և 45 թերթ),
2. թիվ ՀԿԴ/0236/01/23 վարույթը՝ երկու հատորից (համապատասխանաբար՝ 111, 48 թերթ),
3. թիվ ՀԿԴ/0009/06/24 վարույթը՝ հինգ հատորից (համապատասխանաբար՝ 249, 202, 230, 186 և 27 թերթ),
4. թիվ ՀԿԴ/0023/06/24 վարույթը՝ երկու հատորից (համապատասխանաբար՝ 251 և 28 թերթ),
5. թիվ ՀԿԴ/0043/07/24 վարույթը՝ 91 թերթից,
6. թիվ ՀԿԴ/0195/06/23 վարույթը՝ յոթ հատորից (համապատասխանաբար՝ 226, 179, 208, 189, 175, 220 և 57 թերթ),
7. թիվ ՀԿԴ/0198/06/23 վարույթը՝ ութ հատորից (համապատասխանաբար՝ 140, 150, 151, 177, 116, 112, 64 և 47 թերթ),
8. թիվ ՀԿԴ/0204/06/23 վարույթը՝ երեք հատորից (համապատասխանաբար՝ 105, 131 և 39 թերթ),
9. թիվ ՀԿԴ/0219/06/23 վարույթը՝ հինգ հատորից (համապատասխանաբար՝ 255, 236, 259, 241, և 51 թերթ),
10. թիվ ՀԿԴ/0185/06/23 վարույթը՝ յոթ հատորից (համապատասխանաբար՝ 172, 121, 136, 128, 176, 220 և 39 թերթ),
11. թիվ ՀԿԴ/0065/07/24 վարույթը՝ երկու հատորից (համապատասխանաբար՝ 117 և 35 թերթ):

Հարգանքով՝ **ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**